«ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-ի N 1192-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____2023 թվականի N _____Ն

ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-ի N 1192-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 19-ի «Երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքն օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 1192-Ն որոշումը:
2. Սահմանել ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն.Փաշինյան**

2023թ. «___»

Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
«____ » -ի N -----Ն որոշման

ԿԱՐԳ

ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից (այսուհետ՝ լիազոր մարմնի) համաձայնություն տալու գործընթացը:
2. Երկրաբանական ուսումնասիրության համաձայնությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) և սույն որոշմամբ սահմանված կարգով:
3. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվում է Օրենսգրքով սահմանված կարգով:
4. Երկրաբանական ուսումնասիրության համաձայնության հայցման համար անձը (այսուհետ՝ դիմումատու) Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխան դիմում է ներկայացնում լիազոր մարմին:
5. Դիմումի մուտքագրման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում, լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) և այն կառավարության սահմանած դեպքերում՝ Օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: Շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը ծրագիրը ստանալուց հետո՝ օրենքով սահմանված ժամկետում ծրագրի վերաբերյալ տրամադրում է փորձաքննական եզրակացություն: Այն դեպքերում, երբ նախատեսվող գործունեությունը ենթակա չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, ապա շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը ծրագիրը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ժամկետում այդ մասին տեղեկատվություն է տրամադրում լիազոր մարմնին:
6. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության վերաբերյալ համապատասխան եզրակացությունը սահմանված ժամկետում չտրամադրվելու դեպքում այն համարվում է դրական:
7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրական եզրակացությունն ստանալուց հետո լիազոր մարմինը 20 օրվա

ընթացքում, որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված: Այն դեպքերում, երբ ներկայացված ծրագիրը ենթակա չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, ապա լիազոր մարմինը ներկայացված դիմումի վերաբերյալ որոշում է կայացնում սույն կարգի 5-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո 20 օրվա ընթացքում:

8. Եթե սույն կարգի 4-րդ կետով նշված դիմումը ներկայացված է թերություններով և չի համապատասխանում Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասում ներկայացված պահանջներին, ապա Լիազոր մարմինը դիմումի ստացման օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում վերադարձնում է ներկայացված դիմումը՝ նշելով վերադարձնելու բոլոր հիմքերը: Դիմումի թերությունները վերացնելու համար լիազոր մարմինը տրամադրում է 10-օրյա ժամկետ՝ սկսած դիմումը վերադարձնելու մասին ծանուցումը ստանալու պահից: Շտկված դիմումը ներկայացնելու դեպքում՝ դիմումը ներկայացված է համարվում սկզբնական ներկայացման օրը, իսկ դիմումի քննության ժամկետը հաշվարկվում է այն կրկին անգամ ներկայացնելու օրվանից: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա դիմումը համարվում է չներկայացված, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումատուն հիմնավորում է սահմանված ժամկետում թերությունները վերացված դիմումը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:
9. Լիազոր մարմինը մերժում է ներկայացված դիմումը Օրենսգրքի 33.1-րդ հոդվածով սահմանված հիմքերով:
10. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնությունը տրվում է, եթե ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ծրագրում ներառված աշխատանքների կատարման նախանշված մեթոդները, եղանակները, միջոցները և մոտավոր ծավալները համապատասխանում են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նշված աշխատանքների բնույթին:
11. Դիմումի մերժման դեպքում լիազոր մարմնի կողմից նշվում են դիմումի մերժման բոլոր հիմքերը: Դիմումատուն կարող է դիմումի մերժման հիմքերը վերացնելուց հետո նոր դիմում ներկայացնել լիազոր մարմին, որից հետո դիմումի քննությունը սկսվում է սկզբից:
12. Լիազոր մարմնի կողմից երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցումն ստանալուց հետո դիմումատուն 5-օրյա ժամկետում հրավիրվում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրն իր կողմից վավերացնելու համար:
13. Միներալոգիական, հնէաբանական և երկրաբանական այլ հավաքածուների ստեղծման նպատակով կատարվող երկրաբանական ուսումնասիրությունների դեպքում՝ դիմումում պետք է նշվի հավաքածուի ստեղծման համար նախատեսվող նյութի (ապարի, միներալի, բրածոյի, նմուշի, օգտակար հանածոյի կամ այլ) կամ հավաքման ենթակա գեղագիտական և կիսաթանկարժեք քարերի քանակը:
14. Ելնելով հավաքածուների ստեղծման աշխատանքների ձևից և

նպատակներից՝ լիազոր մարմինը կարող է սահմանել հավաքվող նյութի թույլատրելի չափաքանակը:

Հայաստանի Հանրապետության

կառավարության աշխատակազմի

ղեկավար

Ա.Հարությունյան